Մրեն», բայց արձանագրութեան մէջ յիշուում է և նախկինը՝ աւետարանի նուիրաբերութիւնը։ Եթէ լինէր մի այլ աւետարան, կը չհշտուէր այդ մասին որևէ կերպով, քանի որ նուիրաբերող և ստացող անձնաւորութիւնները նոյն են, ինչպէս և նոյն է տեղական իշխանը «պարոն Գրիգոր», որ յիշատա|ուած էր աւետարանի մէջ, միայն առանց հօրը՝ Դաւիթ Շոթքանցի, որ այդ ժամանակ վախճանուած էր, հաւանօրէն։

Է.

Տարաբաղդաբար Ն. Զուղայի աւետարանի մանրանկարների լուսանկարներն ամբողջութեամբ ձեռքի տակ չունինք այժմ, որ անհրաժեշտ էր Իգնատիոսի՝ յատկապէս պատկերազարդական արուեստի մասին լրիւ գաղափար կազմելու. յոյս ունինք այդ պակասը լրացնել մի այլ առթիւ. բայց ունինք ստացողների՝ Բանաւորի եւ Աղատիկնոջ պատկերները Մարկոսի հետ մի տախտակով, զունազարդ արտանկարուած հանգուցեալ տաղանդաւոր նկարիչ Վարդգէս Սուրէնեանցի ձեռքով, որ պիտի հրատարակենք մեր մանրանկարչական քարտէզի մէջ. ներկայ լուսանկարն էլ հանուած է այդ արտանկարութիւնից (սպաս. 11)(1)։

Այս մի խմբանկարն իսկ բաւական է ցոյց տալ, որ յանձին Իգնատիոսի ունինք մի կարող մանրանկարիչ Հռոմոսի և Անիի շրջանից, որ պէտք է իւր արժանաւոր տեղը գրաւէ արևելեան Հայաստանի մանրանկարչութեան պատմութեան մէջ. առաւել արժէքաւոր է այս մանրանկարը, որ չաբլոնական չէ, այլ բնորոշ և անհատական պատկերաւորում ստացողների՝ իրենց հագուստով և զարդ ու զարդարանքով։ Նոյն իսկ աւետարանչի դիմագծերի և արտայայտութեան մէջ սովորականից դուրս արևելեան դրոշմ և ըմբռնում կայ, որ նշան է Իգնատիոսի գիտողական և ստեղծագործական ունակութեան։

Պատկերի վերևի մասում նստած է Մարկոս (նկ. 11) աւետարանիչը, որ ծունկանը դրել է մագաղաթի թերթը և գրում է. «սկ|իզբն ա|ւետ»։ Յետևի ֆոնը մի շէնք է, առաջամասը եռանկիւնի ճակատով, դռնով և լուսամուտով. դռնից կախուած և դէպի լուսամուտը ձգուած վարագոյրը ներքին տեսարանն է մատնանշում։ Աւետարանիչը նստած է բոլորակ, ցած թիկունքով աթոռի և երկար բարձի վերայ. ոտքերի տակ պատուանդան իբրև մաս աթոռի։ Առաջին դրուած է սեղան, կեդրոնում ձողի վերայ հաստատուած գլրակալով, վերան բաց գիրք դրած, որ օրինակն է։ Երկու տեսարանը բաժանող գերանի վերայ գրուած է բոլորգրով. «զկարապետն և զ . . . կանն ստացող աւետարանս| յիշեսջիք», որ յետին գրութիւն է։ Աւետարանիչը լայն թևերով տունիկայ է հագել, ձախ ուսի վերայից մոխրագոյն տոգայ ձգելով. գլուխը թեքել է դէպի ձախ. երեսը ծածկուած բոլորակ և կարճ սև մօրուքով. կարուած են և սև նաև գլխի մազերը, աչքերը մտազբաղ արտայայտութեամբ և դէմքն արևելեան դրոշմով։ Տոգայի փէշով բռնել է մագաղաթի թերթը, ուր գրում է իւր աւետարանը. աջ ձեռքին գրիչ, երեք մատով բռնած, չորրորդը՝ մատանու մատը ծալած, իսկ ճըկոյթը թերթի վերայ՝ պահելու համար։

Ներքևի մասում ստացող ամուսինների՝ Բանաւորի և Աղատիկնոջ պատկերներն են, երկուսն էլ չոքած, ձեռքերը աղօթաւորի ձևով մեկնած դէպի իրենց նուիրաբերած աւետարանը, որ բազմեցրած է բարձր գրակալի վերայ, հաստատուած բոլորակ քառաստիճան պատուանդանի եւ ձողի վերայ։ Աւետարանը կազմած է, ենսին խաչ, թևերը գնդակներով վերջացած։ Աջ կողմից չոքել է այրը, ուսերին վերնազգեստ ձգած, նեղ և կախ թևերով. վերնազգեստն ունի մորթուց օձիք յետևի կողմից։ Վերնազգեստի երեսը ծածկուած է խաչաձև կարմիր զարդերով, որ կպած են իրար և ուղղահայեաց հորիզոնական ուղղութեամբ։ Վերնազգեստի տակից հագել է առաջը բաց «չուխայ» և ապա կապայ, կտորով զօտեորած. երկու զգեստներն էլ ծաղկաւոր են։ Պարանոցի մօտ երևում է սպիտակ շապկի օձիքը։ Գլխարկը բոլորաձև է, եզերքը ազնիւ մորթուց, իսկ արտաքին երեսը ծաղկաւոր կտորով ծածկուած։ Գլխի մազերը կարճ

(1) Սոյն խմբանկարը հրատարակել է Հացունին իւր Հայ Տարազին նուիրուած աշխատութեան մէջ։